ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

« 15 » հուլիսի 2016 թվականի N: 298 - Ա ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐՈՒ N18 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 21-Ի N51-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերի, «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետի «ա» ենթակետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N1392-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 53-րդ և 54-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի N113-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգի» 4-րդ, 5-րդ, 7-րդ, 13-րդ և 17-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2015 թվականի նոյեմբերի 12-ի N956-Ն հրամանի 2-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2016

թվականի մայիսի 26-ի N01/07.1/5761-16 գրությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու N18 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ծնողական խորհրդի 2016 թվականի հունիսի 21-ի նիստի թիվ 2 արձանագրությունը, Նարինե Վարդանյանի 2016 թվականի հունիսի 21-ի դիմումը և Մարիանա Մարոյանի 2016 թվականի հունիսի 21-ի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Դադարեցնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու N18 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Դպրոց) կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) 3 տարուց ավելի խորհրդի անդամ հանդիսացող.

1) Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի կողմից առաջադրված անդամ Արթուր Սուքիասյանի լիազորությունները,

2) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված անդամ Անահիտ Հարությունյանի լիազորությունները:

2. Դադարեցնել Դպրոցի ծնողական խորհրդի կողմից առաջադրված և 2015 թվականի հուլիսի 20-ին Խորհրդի կազմում հաստատված Նարինե Վարդանյանի լիազորությունները՝ համաձայն իր դիմումի:

3. Դադարեցնել Դպրոցի ծնողական խորհրդի կողմից առաջադրված և 2015 թվականի հուլիսի 20-ին Խորհրդի կազմում հաստատված Մարիանա Մարոյանի լիազորությունները՝ համաձայն իր դիմումի:

4. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված և 2015 թվականի հուլիսի 1-ին Խորհրդի կազմում հաստատված Նելլի Փահլևանյանի լիազորութունների ժամկետ սահմանել մինչև 2018 թվականի հուլիսի 1-ը:

5. Գյումրու քաղաքապետի ներկայացմամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված և 2015 թվականի հուլիսի 1-ին Խորհրդի կազմում հաստատված Արթուր Հակոբյանի լիազորությունների ժամկետ սահմանել մինչև 2018 թվականի հուլիսի 1-ը:

6. Դպրոցի մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված և 2015 թվականի հուլիսի 20-ին Խորհրդի կազմում հաստատված Ռիմա Ասատրյանի լիազորությունների ժամկետ սահմանել մինչև 2018 թվականի հուլիսի 20-ը:

7. *Դպրոցի մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված և 2015 թվականի հուլիսի* 20-ին Խորհրդի կազմում հաստատված Նինա Մնացականյանի լիազորությունների ժամկետ սահմանել *մինչև 2018 թվականի հուլիսի 20-ը:*

8. Խորհրդի կազմում 3 տարի ժամկետով հաստատել.

1) Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի կողմից առաջադրված Գեղամ Բաղդասարյանին,

2) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված Անահիտ Հարությունյանին,

3) Դպրոցի ծնողական խորհրդի կողմից առաջադրված Արեգնազան Ամիրխանյանին, Գայանե Մարտիրոսյանին:

9. Հաստատել Խորհրդի անվանական կազմը՝ համաձայն հավելվածի:

10. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2011 թվականի փետրվարի 21-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզային ենթակայության «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություններ» պետական ոչ առևտրային կազմակերպությունների խորհուրդների անվանական կազմերը հաստատելու մասին» N 51-Ա որոշման N13 հավելվածը:

Հ. ՍԻՄՈՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի
2016 թվականի հուլիսի «15» N 298-Ա որոշման

ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿԱԶՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐՈՒ N18 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Բաղդասարյան Գեղամ	- Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի կողմից առաջադրված,
Հարությունյան Անահիտ	- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված,
Փահլևանյան Նելլի	- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված,
Հակոբյան Արթուր	- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված՝ համայնքի ղեկավարի ներկայացմամբ,
Ասատրյան Ռիմա	- մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված,
Մնացականյան Նինա	- մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված,
Ամիրխանյան Արեգնազան	- ծնողական խորհրդի կողմից առաջադրված,
Մարտիրոսյան Գայանե	- ծնողական խորհրդի կողմից առաջադրված:

Հայաստանի Հանրապետության Շիրակի
մարզպետարանի աշխատակազմի ղեկավար՝ Խ. Պողոսյան

Իսկականի հետ ճիշտ է